# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ N 3-Ա**

<<14>> փետրվարի 2025 թվականի                    քաղաք Մարալիկ

## <<ԵՐՎԱԴԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 288 ՏԵՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված <<Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները>> կարգի 28-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 204-րդ կետը և Անի համայնքի Ջրափի բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակարթական նոր դպրոցի կառուցման վերաբերյալ հանրային 1-ին քննարկան 2024 թվականի դեկտեմբերի 23-ի արձանագրությունը.

**Հայաստանի Հանրապետության**

**Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ նախնական համաձայնություն՝ <<ԵՐՎԱԴԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Պետական ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրում 288 տեղ նախագծային հզորությամբ հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | կողմ՝11 | դեմ՝0 | ձեռնպահ՝0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Է. ՌՈՒՌՈՒՏՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | Քվեարկությանը չի մասնակցել | ___________ | ___________ |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |
| Մ. ԱՍԼԱՆՅԱՆ | ___________ | ___________ | ___________ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<14>> փետրվարի 2025 թ.
քաղաք Մարալիկ